

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ  
011401.16.6 «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ուսուցումը՝ բակալավրիատ

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Դիմորդներն ընդունելության քննություն են հանձնում մրցութային մեկ մառարկայից:

Մաս 1. ՀՀ ԶՈՒ ԵՎ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ անկախության ձեռք բերման պատմական էտապները: Երրորդ հանրապետության հռչակումը: Պետական խորհրդանշանները: Զինվորական ծառայության օրենսդրական հիմքերը: Զինվորական երդման տեքստը: Պետական խորհրդանշանները: Քրիստոնեության ընդունումը: Հայոց գրերի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորատեսակները, նրանց մարտական հնարավորությունները: Հայոց հերոսամարտերը, հայ անվանի զորավարներ: ՀՀ ազգային հերոսներ: Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում: Արցախյան ազատամարտ:

Մաս 2. ՀՀ ԶՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումները, տարբերանշանները: Զինծառայողների ընդհանուր պարտականությունները և պատասխանատվությունը: Զինծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքներն ու կարգապահական տույժերը, դրանց տալու հրամանատարների իրավունքները: Զինծառայողների պաշտոնական և հատուկ պարտականությունները, դրանց համար նախատեսված պատասխանատվության տեսակները: Վաշտի շուրջօրյա վերակարգ, պարտականություններն ու պատասխանատվությունը: Վաշտի հերթապահի փաստաթղթերի օրինակելի ցանկը: Ժամապահի պարտականությունները: Նրա անձեռնմխելիությունը: Ժամապահի պարտականությունները պահակակետի ընդունման-հանձման ժամանակ: Զենքի լիցքավորման և լիցքաթափման կարգը: Ժամապահի դիրքը պահակակետում: Փոխարինման կարգը:

Մաս 3. ՇԱՐՄԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շարք հասկացությունը, դրանց տեսակները: Զինծառայողների պարտականությունները շարվելուց առաջ և շարքում: Շարքի տեսակները, Շարքի կառավարում: Շարային կեցվածք: Շարային և երթային քայլ: Դարձումներ տեղում: Դարձումներ շարժման ընթացքում: Շարքից դուրս գալը և շարք վերադառնալը: Պետին մոտենալը և նրանից հեռանալը: Տեղում և շարժման ընթացքում զինվորական ողջույնի կատարումը: Ավտոմատը <<Փոկին- Ա՛Ռ>> դրությունից <<Մեջքին-Ա՛Ռ>> և ավտոմատը <<Մեջքին-Ա՛Ռ>> դրությունից <<Փոկին- Ա՛Ռ>> վարժաձևերը: Ավտոմատը <<Փոկին-Ա՛Ռ>> դրությունից <<Կրծքին-Ա՛Ռ>> և ավտոմատը <<Կրծքին-Ա՛Ռ>> դրությունից <<Փոկին-Ա՛Ռ>> վարժաձևերը:

Մաս 4. ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Մոտոհրաձգային ջոկի կազմը և մարտական հնարավորությունները: Ժամանակակից համագորային մարտի հիմնական սկզբունքները: Ժամանակակից համագորային մարտի տեսակներն ու բնութագիրը: Մարտական ապահովման նպատակը և տեսակները /հետախուզություն, քողարկում, ինժեներական ապահովում, պահպանություն/: Մոտոհրաձգային ջոկը երթակարգում, նախամարտակարգում, մարտակարգում: Զինվորի գործողությունները մարտի ընթացքում /հարձակում, պաշտպանություն/: Հարակից երկրների զինված ուժերի կառուցվածքը, սպառազինությունը: Մոտոհրաձգային ջոկի հնարավորությունները հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելիս: Հակատանկային ականներ: Ընդհանուր կառուցվածքը, գործողության սկզբունքը: Հակա-հետևակային ականներ: Ընդհանուր կառուցվածքը, գործողության սկզբունքը: Ջոկի դիրքերի ինժեներական սարքավորումները /խրամատ, թաքստոց, բլինդաժ/: Մարտում զինվորի տեղաշարժման ձևերը: Զինվորը որպես դիտորդ, զինվորը դետրում:

#### Մաս 5. ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ավտոմատի կառուցվածքը: Ավտոմատի տեսակները, նրանց մարտական հնարավորությունները: Ավտոմատի հիմնական մասերն ու մեխանիզմները, աշխատանքի սկզբունքը մենահատ և ավտոմատ հրաձգության ժամանակ: Ավտոմատի մաքրումը, յուղումը, պահպանումը և խնամքը: Անվտանգության կանոնները պարապմունքների և հրաձգության ժամանակ: Հրաձգության ժամանակ ավտոմատի հնարավոր խափանումները և դրանց վերացման միջոցները: Կրակոցի երևույթը, հետագծի գոյացումը: Ուղիղ կրակոց: Պատսպարված, խոցելի և մեռյալ տարածություններ: Հրաձգության հերթականությունը: Նշանառման տարրերը: Ձեռքի նոնակներ, կառուցվածքը: Ձեռքի նոնակների նետելու եղանակներն ու կանոնները: Հրաձգային զենքի փամփուշտների տեսակները և կառուցվածքը:

#### Մաս 6. ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հորիզոնի կողմերի որոշումը կողմնացույցի օգնությամբ: Կողմնացույցի կառուցվածքը: Հորիզոնի կողմերի որոշումը տեղանքի առարկաներով և այլ եղանակներով: Մագնիսական ազիմուտ: Ազիմուտներով շարժվելը: Տեղագրական քարտեզներ: Քարտեզի մասշտաբ: Քարտեզի պայմանական նշանները: Տեղանքի գնահատումը ըստ տարատեսակների/ըստ ռեյեֆի, ըստ բուսածածկույթի, ըստ մարտավարական հատկությունների/: Հեռավորության որոշման եղանակները /հազարերորդականի բանաձև, հեռավորության որոշումը առարկայի գծային չափսերով, քայլերով, աչքաչափով, լսողությամբ/:

#### Մաս 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Միջազգային մարդասիրական իրավունքի էությունը, կանոնակարգման ոլորտները: Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներն ու միջոցները: Ռազմագերիները, նրանց իրավունքները, նրանց հետ վարվելակերպը:

#### Մաս 8. ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բնակչության պաշտպանական համակարգի ապահովման ձևերը: Անհատական պաշտպանական միջոցներ: Պաշտպանական կառույցներ: Ազդարարման միասնական

համակարգ: Բնածին աղետներ: Երկրաշարժեր, ջրհեղներ, սողանքներ, սելավներ, փլուզումներ, բնածին հրդեհներ: Բնութագրումը և պաշտպանվելու միջոցոցառումները: Տեխնածին աղետներ: Հրդեհներ և պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, հիդրոդինամիկական վթարներ: Ճառագայթային, քիմիական հետախուզության և բաժնեչափական հսկողության սարքեր: Հարձակման ժամանակակից սովորական և խոցման ոչ ավանդական զենքեր: Միջուկային զենք, նրա բնութագիրը և խոցող գործոնները: Քիմիական զենք, նրա ազդեցությունը մարդկային օրգանիզմի վրա: Կենսաբանական զենք, վարակիչ հիվանդությունների տեսակները:

## **ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է 20 ՄԻԱՎՈՐԱՆՈՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ**

Հարցատոմսերում ընդգրկված է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 5 միավոր:

Պատասխանները նշվում են հատուկ ձևաթղթում: